Հայ-ռուսական համալսարանում գործող
ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին
(հասցե՝ 0051, *Հայաստանի Հանրապետություն,*
ք. Երևան, Հովսեփ Էմինի փող", 123*)*

Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի

Արմինե Հովսեփյանի՝ «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը վարչաիրավական հարաբերություններում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Արմինե Հովսեփյանի ատենախոսության թեմայի արդիականությունը պայմանավորված է վարչական իրավունքի տեսության և պրակտիկայի էական հիմնահարցերից մեկի՝ հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության հիմնախնդիրների համակարգային հետազոտության անհրաժեշտությամբ:

Տարիների ընթացքում՝ հետազոտության առարկա ոլորտում ձևավորված իրավական չափորոշիչները որոշակի փոփոխություններ են ենթադրում, ինչը կարևորվում է սահմանադրական նոր կարգավորումների և վարչական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համակարգերի արդիականացման անրաժեշտությամբ:

Միաժամանակ, հայեցողական լիազորությունների բովանդակային հատկանիշների և իրավական հայեցակարգերի տեսական-իրավական վերլուծությունը, Հայաստանի Հանրապետությունում դրանց

կիրառելիության սահմանների սահմանումն ու առանձնահատկությունների բացահայտումը, ինչպես նաև այդ լիազորությունների կիրառման իրավական հետևանքների գնահատումը հրատապ են ոչ միայն իրավակիրառ պրակտիկայի արդյունավետության երաշխավորման առումով, այլև՝ օրինաստեղծ գործունեության լավարկման անհրաժեշտության տեսանկյունից:

Համակարծիք լինելով հեղինակի այն պնդման հետ, որ հայեցողական լիազորությունների իրավաչափ կիրառման հիմնական նպատակը պետք է դիտարկել հայեցողական լիազորությունների կիրառման միջոցով վարչական մարմնին հնարավորություն վերապահելով լուծելու օրենսդրությամբ չկարգավորված կամ մասամբ կարգավորված հարցեր՝ ապահովելով մարդու սահմանադրական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը (էջ 3), միաժամանակ, անհրաժեշտ է կարևորել, որ գրախոսման ներկայացված աշխատանքն ինքնին արդիական է հենց վարչական մարմինների գործունեության իրավակարգի ամրապնդմանն ուղղված միջոցների հետագա կատարելագործման ու իրավական կարգավորումների հիմնախնդիրների լուծման տեսանկյունից:

Բացի դրանից, վարչաիրավական հարաբերություններում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության կամ վարչական հայեցողության արժեբանական նշանակության բացահայտմանն ուղղված յուրաքանչյուր գիտական հետազոտություն անկասկած համակարգային նշանակություն ունի հատկապես իրավական այդ ինստիտուտի վերաբերյալ տեսական և միասնական մոտեցումների ձևավորման համատեքստում:

Այս առումով խրախուսելի է հեղինակի կողմից նման աշխատանք ներկայացնելը, որի հիմքում առաջադրված են հետազոտական կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսին են՝ հայեցողական լիազորությունների բովանդակային հատկանիշների ու իրավական հայեցակարգերի ժամանակակից վիճակի, այդ լիազորությունների կիրառելիության սահմաններին ու

առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց կիրառման իրավական հետևանքների գնահատմանն առնչվող հիմնահարցերի հետազոտումը:

Հեղինակը գիտական բարեխղճությամբ ու անհրաժեշտ հետազոտական խորությամբ անդրադարձ կատարելով հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության հիմնահարցին՝ համակարգային վերլուծություն է կատարել այդ ինստիտուտի շուրջ ձևավորված և մասնագիտական գրականության մեջ շրջանառվող մոտեցումներն ու տեսակետները:

Ընդհանուր առմամբ հեղինակն ուսումնասիրել է համարժեք մասնագիտական գրականություն և վերլուծել թեմային առնչվող գիտագործնական նյութ: Միաժամանակ, աշխատանքի հեղինակը դրսևորել է թեմային առնչվող տեսական աղբյուրների համարժեք իրազեկվածություն, ինչպես նաև դրանցից օգտվելու և պատշաճ վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսության կառուցվածքը հնարավորություն է տվել ընտրված հարցադրումների առնչությամբ նյութի շարադրանքը դարձնելու առավել տրամաբանական ու ամբողջական, մասնավորապես առանձին հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը նպաստել է մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտությանը:

Հեղինակի կողմից հրատարակված մենագրությունը և գիտական հոդվածները համարժեքորեն են արտացոլում ատենախոսության հիմնադրույթներին առնչվող և պաշտպանության ներկայացվող եզրահանգումները:

Ատենախոսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը դրսևորել է ինքնուրույն հետազոտություն կատարելու և դրանց արդյունքում հնարավորինս ինքնատիպ ու որոշակի հիմնավորումներով ուղեկցվող դատողություններ անելու անհրաժեշտ ունակություն:

Ատենախոսությունը, որոշ բացառություններով հանդերձ, շարադրված է հստակ ու միաժամանակ պատշաճ գիտական լեզվաոճով, հեղինակը կարողացել է ապահովել նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված հիմնադրույթները, կարծում եմ, համապատասխանում են ներկայացվող պահանջներին:

Ընդհանուր առմամբ աշխատանքն առանձնանում է բարվոք լեզվաոճով, դրանում հեղինակն իր իրավական մտածելակերպի առանձնահատուկ ու ինքնատիպ ոճով կարողացել է ապահովել ինչպես նյութի շարադրանքի որակը, այնպես էլ աշխատանքի հստակությունը՝ պայմանավորված սեփական դատողությունների հիման վրա ներկայացված մեթոդաբանական ու տեսական-իրավական անհրաժեշտ փաստարկներով ու հիմնավորումներով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ ստորև ներկայացնում եմ հետևյալ նկատառումները.

1. Ատենախոսության 111-րդ ենթագլխում անդրադառնալով «հայեցողական լիազորություններ» հասկացության իրավական բովանդակությանն ու դրա վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ շրջանառվող տեսակետների ու մոտեցումների համակարգային վերլուծությանը, որպես եզրահանգում հեղինակի կողմից տրվել է հետևյալ սահմանումը, որ՝ *«հայեցողական լիազորություններն օրենքով վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձին իր իրավասության շրջանակում վերապահված իրավունքն է՝ ընդունել վարչական ակտ մեկից ավելի իրավաչափ ազատ լուծումներից մեկն ընտրելու հնարավորությամբ՝ հիմքում դնելով մարդու իրավունքներն ու օրինական շահերը»* (էջ 27): Ներկայացված սահմանումն ըստ էության նույնաբովանդակ է արդեն իսկ շրջանառվող առանձին տեսակետներին, որոնց անդրադարձ է կատարել նաև հեղինակը աշխատանքի տեքստում:

Ներկայացված հեղինակային սահմանման կապակցությամբ անհրաժեշտ է լրացուցիչ հստակեցնել, թե ինչպիսի՞ առանձնահատկություններ կան և ինչպե՞ս է տարանջատվում «հեղինակային»

սահմանումը շրջանառվող տեսակետներից ոչ միայն բովանդակային իմաստով, այլև գործառնական նշանակությամբ:

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ՝ *հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:* Իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:* Այս սահմանման բովանդակությունից ելնելով կարելի է ենթադրել, որ հեղինակային շարադրանքի և նորմատիվային սահմանման տարրերն ևս ունեն ընդհանուր աղերսներ:

2. Պաշտպանության ներկայացված 5-րդ դրույթի առնչությամբ, այն է՝ *«(...) վարչական մարմնի գործառույթների չարաշահումը հիմք է հասարակության համար ոչ ցանկալի հետևանքների առաջացմանը, քանի որ դրանք խաթարում են մարդու իրավունքներն ու օրինական շահերը: Այդ գործառույթների չարաշահման կանխարգելման հրամայականը ենթադրում է դրա հետևանքով առաջացած հնարավոր կորուստների նվազեցում և կանխարգելման միջոցառումների ձեռնարկում՝ պայմանավորված վարչական մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների հնարավոր կիրառմամբ: Հայեցողական լիազորությունների կիրառումն ունի երկակի նշանակություն. այն ինչպես կարող է խոչընդոտել, այնպես էլ նպաստել կոռուպցիայի դրսևորմանը: Կոռուպցիայի կանխարգելման միջոցառումների մշակումը և իրականացումը կարող են նպաստել իրավական պրակտիկայի ձևավորմանն ու վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափ ընտրությանը»* (էջ 12),

անհրաժեշտ է նշել, որ աշխատանքի 31-րդ ենթագլխում (էջ 84-100) բավարար չափով անդրադարձ չի կատարվել դրա բովանդակային

նշանակությանն ու գիտական նորույթին բնորոշ պահանջների պահպանմանը: Այդ պահանջների բավարարումն ինքնին կնպաստեր ոչ միայն պաշտպանության ենթակա գիտական նորույթի առավել հստակ ընկալմանը, այլև՝ այն առավել կընդգծեր այդ նորույթի ինքնատիպությունը: Ավելին, ատենախոսության նշված ենթագլխում անշուշտ կա որոշակի առանձնացված նյութ՝ դրանց համակարգվածության առումով, սակայն արդեն իսկ մշակված նյութը, կարծում ենք, բավարար չափով համարժեք արտացոլված չէ նշված դրույթում, ինչն էլ մասամբ խնդրահարույց է դարձրել՝ վարչական մարմնի գործառույթների և այդ մարմնի հայեցողական լիազորությունների կիրառման սահմանները հստակեցնելու խնդիրը:

3. Այնուհետև, նույն տրամաբանության շրջանակում անհրաժեշտ է նաև նկատել, որ պաշտպանության ներկայացված 7-րդ դրույթի բովանդակությունից հետևում է, որ՝ վարչական մարմինների վարչարարության արդյունավետությունը և հայեցողական լիազորությունների իրավաչափությունը անհրաժեշտ է պայմանավորել վարչական մարմնի ջանասիրությամբ, պատասխանատվությամբ և մարդասիրությամբ (էջ 13):

Ներկայացված դրույթն ևս հստակեցման ու պարզաբանման կարիք ունի, քանի որ աշխատանքի 3.3-րդ ենթագլխում (էջ 114-129) այդպես էլ բավարար չափով չեն հիմնավորվում, թե վարչական մարմնի «ջանասիրությունը» կամ «մարդասիրությունն» իրավական ի՞նչ բովանդակային ու գործառնական նշանակություն ունեն և միաժամանակ էական ինչպիսի՞ ազդեցություն կարող են ունենալ հայեցողական լիազորությունների իրավաչափության երաշխավորման հարցում, առավել ևս որևէ անդրադարձ չկատարելով դրանց գիտական նորույթի բովանդակային նշանակության բացահայտմանն ու վերջիններիս բնութագրող պահանջների բավարարմանը:

4. Հեղինակը աշխատանքի 2.2-րդ և առանձին ենթագլուխներում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և վարչարարության հիմնարար սկզբունքների հարաբերակցության համատեքստում

անդրադարձ է կատարում վարչական մարմնի կամայականության ու հայեցողական լիազորությունների սահմանափակման հիմնախնդրին (էջ 49-65):

Այդուհանդերձ, աշխատանքի արժեբանական նշանակության ապահովման տեսանկյունից ցանկալի կլիներ հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության հիմնախնդիրը դիտարկվեր ոչ միայն վարչաիրավական կարգավորման կառուցակարգերի և վարչական արդարադատության գործունեության շրջանակներում, այլև՝ հայեցողական «նիհիլիզմի» որպես վարչական հայեցողություն իրականացնելուց հրաժարման համատեքստում:

Ներկայացված հիմնահարցի և հետազոտության առարկա հիմնախնդիրների համակարգային ու համակողմանի վերլուծության շրջանակում, կարծում ենք աշխատանքն առավել տրամաբանական ու ամբողջական կլիներ մասնավոր ու կոնկրետ խնդիրների ամբողջական հետազոտության տեսանկյունից:

5. Ատենախոսության 1.1, 1.2 և 2.1-րդ ենթագլուխներում հեղինակը «դրվագային» մոտեցում է ցուցաբերում «վարչական հայեցողություն» հասկացության էության ու բովանդակային նշանակության հարցերին (էջ 15-49):

Սակայն, կարևոր նշանակություն ունի հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության և վարչական հայեցողության հարաբերակցության հիմնախնդրի համապարփակ հետազոտությունը:

Այս առումով, կարծում ենք, ատենախոսության գիտական արժեքը՝ աշխատանքի արժեբանական և գործառնական նշանակության ապահովման տեսանկյունից ավելի կշահեր, եթե հեղինակը հետազոտության առարկա հիմնահարցերը վերլուծեր վարչական հայեցողության հիմնական բնութագրիչների, վարչաիրավական կարգավորումների կառուցակարգերում վարչական հայեցողության գործառույթների և այդ հայեցողության իրացման

իրավական, ոչ իրավական և արտաիրավական ձևերի համալիր վերլուծության համատեքստում:

Ի վերջո, պետք է հաշվի առնվեր այն հանգամանքը, որ վարչական հայեցողությունն որոշակի առումով ընկալվում է որպես վարչական մարմնին վերապահվող «վստահություն»՝ իրավական անորոշության պայմաններում հանրային շահերի լիարժեք և օպերատիվ ապահովման նպատակով: Ասվածի համատեքստում, թերևս, կարելի էր քննարկել «վարչական հայեցողություն» և «հայեցողական լիազորություն» եզրույթների բովանդակային ու գործառնական նշանակության նույնականացման ու համադրման մասին հարցը:

Վերը նշված նկատառումներով հանդերձ, անհրաժեշտ է նշել, որ դրանք հիմնականում աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից են բխում և չեն ստվերում կատարված աշխատանքի որակն ու գիտական արժեքը:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից արված եզրահանգումները հիմնականում բխում են ատենախոսության ընդհանուր տրամաբանությունից, համապատասխանում առաջադրված նպատակներին ու խնդիրներին:

Ատենախոսությունը շարադրված է հասկանալի ու գիտական ոճով, հեղինակը ապահովել է նյութի շարադրանքի ներքին տրամաբանությունը:

Պաշտպանության ներկայացված առանձին հիմնադրույթներ համապատասխանում են ներկայացվող պահանջներին՝ ինչպես նորույթի, այնպես էլ հիմնա-վորվածության չափանիշներով:

Սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական դրույթներն ու բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ **Արմինե Հովսեփյանի՝** «Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը վարչաիրավական հարաբերություններում» վերտառությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

համար ներկայացված թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԲ.00.02 - Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր

Ա.Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

25 հունվարի 2026 թ.

Պրոֆեսոր Աշոտ Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Ա.ՄԱՐՈՒԹՅԱՆ

25 հունվարի 2026 թ.

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
АППАРАТ
КОНСТИТУЦИОННОГО
СУДА РА